ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հոկտեմբերի 7-ից հոկտեմբերի 11-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի Ասիական զարգացման բանկի կողմից կազմակերպված «APMG Public-Private Partnerships (PPPs) Foundation Course» խորագրով դասընթացին մասնակցության արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

Արուսյակ Խաչատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի սույն թվականի հոկտեմբերի 7-ի 2350-Ա հրամանի համաձայն 2024թ. հոկտեմբերի 7-ից հոկտեմբերի 11-ը գործուղվել եմ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի քաղաք:

4. **Հրավիրող կողմը.**

Ասիական զարգացման բանկ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն «APMG Public-Private Partnerships (PPPs) Foundation Course» խորագրով դասընթացին: Դասընթացի ժամանակ տրված տեղեկատվությունը կարելի է կիրառել Ճանապարհների հիմնանորոգման, դրանց հետագա պահպանման ժամանակ առաջացող խնդիրների լուծման տարբերակներ գտնելու համար:

6. **Քննարկված թեմաները.**

«APMG Public-Private Partnerships (PPPs) Foundation Course» դասընթացի ընթացքում ներկայացվել են պետություն-մասնավոր (այսուհետ՝ ՊՄԳ) հայեցակարգը, որպես ենթակառուցվածքների ձեռքբերման և կառավարման տարբերակ, ՊՄԳ ուղեցույցի նպատակների շրջանակը և վերջինիս հիմնական բնութագրերը: Ներկայացվել են նաև ՊՄԳ-ի հիմնական դրույթները, որոնք ներառում են ՊՄԳ-ի պատշաճ կառուցվածքի և գործընթացի ամբողջ արդիականությունն ու առանձնահատկությունները, ներառյալ գործընթացը կազմող փուլերից յուրաքանչյուրի նկարագրությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման ընթացքում տարբեր երկրների մասնակիցներ ներկայացրեցին իրենց երկրների փորձը և ՊՄԳ կիրառման ոլորտները: Քննարկվեցին մի շարք եվրոպական պետությունների փորձը և ձեռքբերումները ՊՄԳ-ի կիրառման արդյունքում: Ընդգծվեց, որ հնարավոր է առավելագույն օգուտ քաղել գնումների այս տարբերակից՝ լրացնելով ենթակառուցվածքների բացերը՝ ներգրավելով ավելի շատ մասնավոր կապիտալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա շարունակական համագործակցության վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կազմակերպիչների կողմից ընդգծվել է սույն դասընթացի կարևորությունը, շարունակության ապահովում և մասնակիցների կողմից ձեռք բերված գիտելիքների կիրառումը գործնականում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

15.10.2024թ.